

## Կ Ա Ր Ծ Ի Ք

### *Թամարա Զավենի Գրիգորյանի «Հարկային ծառայության մարմինների և հարկ վճարողների իրավասուբյեկտության հիմնախնդիրները» վերստառությամբ թեկնածուական ատենախոսության վերաբերյալ*

05-ը հունվարի 2021թ.

#### *I. Նկարագրական մաս.*

Թամարա Զավենի Գրիգորյանի «Հարկային ծառայության մարմինների և հարկ վճարողների իրավասուբյեկտության հիմնախնդիրները» վերստառությամբ ԺԲ.00.02 - «Հանրային իրավունք» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ատենախոսությունը կարևոր նշանակություն ունի գիտության զարգացման համար՝ հաշվի առնելով, որ ընտրված թեմայի արդիականությունը անհերքելի է առանձին տեսակի վարչաիրավական հարաբերությունների սուբյեկտների իրավական կարգավիճակի առանձնահատկությունների ուսումնասիրության և առկա խնդիրները վեր հանելու անհրաժեշտության համատեքստում: Աշխատանքի ներածությունում հեղինակի կողմից պատշաճ ներկայացված են ընտրված թեմայի արդիականությունը, կատարված հետազոտության օբյեկտը, առարկան, նպատակներն ու խնդիրները, աշխատանքի գիտական ուսումնասիրության մեթոդաբանությունը, ինչպես նաև՝ հետազոտության գիտական նորույթը: Հեղինակին հաջողվել է առաջ քաշել արդիական և կարևորագույն խնդիրներ, առաջարկել դրանց համարժեք լուծումներ կամ բարելավմանն ուղղված ուղենիշեր:

Հեղինակը հետազոտության իրականացման նպատակով ուսումնասիրել է ոչ միայն հայրենական, այլև նաև՝ մի շարք արտասահմանյան գրականություն: Նշանակավոր է հեղինակի կողմից նեղ ոլորտային ուսումնասիրությունն ու գործնական իրողության վերհանումը:

Աշխատանքն աչքի է ընկնում հեղինակի կողմից ուսումնասիրված և բացահայտված հարցադրումների շուրջ սեփական ինքնատիպ դատողությունների և խնդիրների լուծում առաջարկելու առկայությունով:

Այնուամենայնիվ աշխատությունում առկա են որոշ բովանդակային և ֆորմալ բնույթի թերացումներ, որոնք շարադրվում են ստորև՝ բնավ չնսեմացնելով հեղինակի կողմից



ներկայացված առաջարկությունների և եզրահանգումների դերը, աշխատությունում տեղ գտած դատողությունները.

## II. Նկատառումներ

### a) Բովանդակային բնույթի թերացումներ.

• «հարկային ծառայության մարմին» և «հարկային մարմին» հասկացությունների մասով: Աշխատությունը հեղինակի կողմից վերնագրվել է «Հարկային ծառայության մարմինների և հարկ վճարողների իրավասուբյեկտության հիմնախնդիրները» վերտառությամբ, մինչդեռ ցանկալի կլիներ հարկային ծառայության մարմին հասկացության բացահայտումը այն նկատառմամբ, որ օրենսդրությունում հարկային ծառայության մարմին եզրույթի սահմանում առկա չէ, սակայն օրենսդիրը «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքում օգտագործել է հարկային մարմին եզրույթը, իսկ ՀՀ հարկային օրենսգրքով սահմանված է հասկացությունը, հետևաբար՝ մեր գնահատմամբ դրանք նույնական եզրույթներ չեն, և տարբերակումից խուսափելու համար նպատակահարմար էր եզրույթների բովանդակության բացահայտումն ու ստույգ մեկի ընտրության հիմնավորումը: Բացի այդ, ըստ մեզ՝ նպատակահարմար կլիներ հեղինակի կողմից աշխատության վերնագրումը «Հարկային ծառայության մարմինների և հարկ վճարողների իրավասուբյեկտության **որոշ հիմնախնդիրները**»՝ նկատի ունենալով, որ ուղորտային խնդիրները կարող են բազմաթիվ լինել և դրանք հեղինակի կողմից չէին կարող սպառիչ բացահայտվել մեկ աշխատության շրջանակներում:

• *Օրենսդրությամբ որոշ սուբյեկտների հասկացություններ կամ այլ նորմեր սահմանելու առաջարկության վերաբերյալ:* Հեղինակը աշխատության «Հարկային իրավունքի սուբյեկտները» վերտառությամբ գլխի «Հարկային իրավունքի սուբյեկտների ընդհանուր բնութագիրը» անվանմամբ ենթագլխի հատվածում հատկորոշել է հարկային իրավահարաբերությունների պարտադիր և ֆակուլտատիվ սուբյեկտների շրջանակը: Իրավացիորեն ընդգծելով սուբյեկտների կարևորությունն ու առկա իրավակարգավորումների թերությունները՝ հեղինակը ոչ սահուն կերպով է կատարել առաջարկություններ օրենսդրությամբ որոշ սուբյեկտների հասկացությունները սահմանելու համար: Մասնավորապես՝ հեղինակի կողմից բավարար չի հիմնավորվել օրենսդրությամբ իր կողմից առաջարկվող հասկացությունների բացակայության հետևանքով որևէ խնդրի առաջացումը: Բացի այդ, հեղինակը չի մասնավորեցրել, թե իր կողմից առաջարկվող հասկացությունների որոշարկման հիմքում ինչն է ընկած: Օրինակ՝ հեղինակը առաջարկել է ՀՀ հարկային



օրենսգրքում ամրագրել մասնագետի իրավունքներն ու պարտականությունները (էջ 16), կամ փորձագետի հասկացությունը (էջ 18), մինչդեռ չի մասնավորեցրել, թե նշված նորմերի բովանդակության ելակետը որն է, արդյո՞ք դրանք սահմանվել են օրենսդրությունում արդեն իսկ առկա հասկացություններից անալոգիայի միջոցով, թե տեսական որևէ հիմնավորմամբ:

• *«հարկ վճարող» եզրույթի մասով:* Հաջորդիվ, աշխատության 21-22 էջերում հեղինակը բնորոշել է «հարկ վճարող» եզրույթը, մինչդեռ բացակայում է օրենսդրությամբ արդեն իսկ սահմանված հասկացությունից տարբերվող այլ սահմանում ներկայացնելու հիմնավորումները, թեպետ աշխատանքի հետագա հատվածներից մեկում (էջ 39), կարծես թե, հեղինակն ընդունելի է համարել արդեն իսկ ամրագրված հասկացությունը:

• *Ֆիզիկական անձանց և այլ հարկատուների իրավունակության ու գործունակության վերաբերյալ:* Ներկայացնելով հարկային իարավասության հատկանիշները, տարբերն ու հասկացությունը՝ պաշտպանության առաջադրվող դրույթներից մեկում հեղինակն արձանագրել է, որ. «Ի տարբերություն մասնավոր ոլորտի իրավահարաբերությունների, հարկային իրավահարաբերություններում իրավասության հատկանիշները սկզբանե դրսևորվում է իրավունակության և գործունակության միաժամանակյա առկայությամբ», մինևույն ժամանակ աշխատանքի համապատասխան հատվածներում (օրինակ՝ 37-38 էջեր) հեղինակը գտել է, որ ֆիզիկական անձի հարկային իրավունակությունը ծագում է ծնվելու պահից, իսկ գործունակությունը պայմանավորված է որոշակի պայմանների առկայությամբ, նման պայմաններում կարծում ենք, որ անհրաժեշտ էր հեղինակի կողմից նշված դատողությունների էական տարբերության մանրամասն հիմնավորում և պարզաբանում:

• *«պատասխանատվությունը մեղքի համար» և «անձնական պատասխանատվության» սկզբունքների վերաբերյալ:* Աշխատության հեղինակի կողմից պաշտպանության ներկայացվող դրույթներից է նաև հարկային պատասխանատվությանն առնչվող կարգավորումներում փոփոխություն կատարելը: Մասնավորապես՝ հեղինակը գտել է, որ հարկային պատասխանատվության սուբյեկտ պետք է հանդիսանա խախտում թույլ տված անձը, արդյունքում պետք է գործեն «պատասխանատվությունը մեղքի համար» և «անձնական պատասխանատվության» սկզբունքները: Այս թեզի առնչությամբ գտնում ենք, որ հեղինակը պետք է ուսումնասիրության առարկա դարձներ և՛ գործող օրենսդրությունը և՛ միջազգային իրավական ակտերը, որոնք առնչվում են իրավաբանական անձին պատասխանատվության ենթարկելուն: Առնվազն օրինակ՝ Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի «Վարչական



սանկցիաների մասին» (91) 1 հանձնարարականը<sup>1</sup>: Հեղինակը, ընդգծելով իրավաբանական անձանց և դրանց պաշտոնատար անձանց պատասխանատվության հիմքերն ու սահմաններն ամրագրելու անհրաժեշտությունը, պետք է վեր հաներ կարգավորման բացակայության կամ թերի կարգավորման արդյունքում առաջացած խնդիրները (թերևս մասամբ)<sup>2</sup>՝ առաջարկելով դրանց լուծման սեփական ուղին:

• *«վարչարարություն» և «հարկային վարչարարություն» հասկացությունների փոխհարաբերակցության ներկայացման անհրաժեշտության մասին:* Հաջորդիվ հեղինակը աշխատանքում հետազոտման առարկա է դարձրել «հարկային վարչարարություն» եզրույթը՝ ներկայացնելով և հիմնավորելով հասկացության իր տեսլականը, մինչդեռ կարծում ենք՝ համակարգային առումով նպատակահարմար կլիներ նաև հեղինակի կողմից «վարչարարություն» և «հարկային վարչարարություն» եզրույթների և սահմանումների փոխհարաբերակցությունը քննարկել՝ հաշվի առնելով, որ հարկային վարչարարությունն ի վերջո առանձին տեսակի վարչական վարույթ է և դրա հասկացության սահմանումն առնվազն պետք է արտահայտի «վարչարարություն» եզրույթի գաղափարը:

• *Էլեկտրոնային հարկային վարչարարության մասին:* Աշխատության «Հարկային վարչարարության կատարելագործման հիմնական ուղղությունները» վերստառությամբ հատվածում հեղինակը ուսումնասիրության առարկա է դարձրել էլեկտրոնային հարկային վարչարարությունն ու հարկային վարչարարությունում էլեկտրոնային ընթացակարգերի ներդրումը, ինչը ողջունելի է, սակայն հեղինակը չի անդրադարձել արդեն իսկ առկա իրավակարգավորումներին, որոնք անգամ գործնականում արդեն իսկ խնդիրներ են առաջացրել, և անհրաժեշտ էր միայն առկա կարգավորումների և դրանց առնչվող պրակտիկայի հենքի վրա ներկայացնել զարգացմանն ուղղված միտումները<sup>2</sup>:

***Ե) Ֆորմալ բնույթի թերացումներ.***

Ընդհանուր առմամբ աշխատությունը համապատասխանում է ատենախոսությանը ներկայացվող պահանջներին՝ թեպետ առկա են որոշ խմբագրական և ատենախոսությանը ներկայացվող ձևավորման պահանջների խախտումներ, օրինակ՝ որոշ դեպքերում հղումը չի պարունակում նյութը նույնացնող անհրաժեշտ բոլոր տվյալները կամ համացանցային

<sup>1</sup> Հասանելի է հետևյալ հղումով՝ <http://docs.cntd.ru/document/90199591>, 30.12.2020թ.  
<sup>2</sup> Օրինակ՝ ՀՀ Սահմանադրական դատարանի 12.05.2020 թվականի թիվ ՍԴՈ-1529 որոշումը, որում սահմանադրական վերահսկողության առարկա է դարձվել ՀՀ հարկային օրենսգրքի 66-րդ հոդվածի 4-րդ հոդվածի 1-ին մասի 66-րդ կետը:

կայքերին և էլեկտրոնային պաշարներին վերաբերող հղումներում բացակայում է աղբյուրի էլեկտրոնային հասցե մուտք գործելու ժամանակի վերաբերյալ նշումը:

**III. Եզրահանգում.**

Ամփոփելով աշխատության վերաբերյալ կարծիքը՝ գտնում ենք, որ արձանագրված թերացումները, բացթողումներն ու լիարժեքության վերաբերյալ նկատառումները չեն նսեմացնում ատենախոսության գիտական արժեքը, ուստի Թամարա Զավենի Գրիգորյանի «Հարկային ծառայության մարմինների և հարկ վճարողների իրավասուբյեկտության հիմնախնդիրները» վերտառությամբ ԺԲ.00.02-«Հանրային իրավունք» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի համար ատենախոսությունը համապատասխանում է թեկնածուական ատենախոսությանը ներկայացվող պահանջներին, և ատենախոսության հեղինակն արժանի է ԺԲ.00.02 - «Հանրային իրավունք» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

**Հայ-Ռուսական համալսարանի իրավագիտության**

**ֆակուլտետի իրավունքի տեսության և**

**սահմանադրական իրավունքի ամբիոնի**

**ավագ դասախոս, իրավաբանական**

**գիտությունների թեկնածու, դոցենտ՝**

**Ռաֆիկ Խանդանյան**

*Ռ. Զավենիյանի արտրագրությունը  
կասկած էմ  
ՀՀԿ գիտական փարբուղաբ  
Ռ. Ա. Կասաբաբովա*

